
ՊԵՇՏՈՆԵԱՑ ԵԿԵՂԵՑԻ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ԱԼՊԵՐԹ ԳԱԼՃՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԻԱՐ ԱԼՊԸՐԹ ԳԱԼՃԵԱՆԻՆ ՈՐ Ի ՅՕԳԼԸՆՏ, Ի ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Ամերիկայի Արևմտեան Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեանէն Ձեր երկար տարիներու հետևողական, հաւատարիմ ու անսակարկ ծառայութեանց մասին թէ՛ Օգլընտի Ս. Վարդան եկեղեցւոյ Հոգաբարձութեան և թէ՛ Արևմտեան Թեմի թեմական կեդրոնական իշխանութեան ժողովական-վարչական կառոյցներուն Ձեր բերած գործօն և արժէքաւոր մասնակցութեամբը:

Ձեր երկարամեայ ծառայութիւնը բնականօրէն արտայայտութիւնն է Ձեր անհուն սիրոյն հանդէպ Ձեր մայրենի Եկեղեցիին: Դուք Հայ Եկեղեցիին մէջ տեսաք քրիստոնէական հաւատքին մարմնացումը հայկական կեանքի տուեալներու շրջագծին մէջ: Ձեզի համար Հայոց Եկեղեցին եղաւ խտացումը քրիստոնէական սիրոյ և հաւատքի ու մարդկային և ազգային ամենէն բարձր իտէալներու:

Ի գնահատութիւն Ձեր բազում տարիներու օգտաշատ գործունէութեան՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ *շքանշանը:*

Ի խորոց սրտի կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի շնորհէ առողջ կեանք և անսպառ երջանկութիւն, ինչպէս նաև նորանոր ծառայութիւններ մեր Եկեղեցւոյ զօրացման և մեր ժողովուրդի բարիքին համար:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 26 Մարտի
Յամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 81: